Հաստատում եմ

Տնօրեն /Հ. Կոստանյան/

# Վանաձորի Հ.Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցի

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԼԱՆ

2021-2022 ուստարի

փ/տնօրեն՝ Ն.Պողոսյան

# № 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԼԱՆ

## 2021-2022 ուստարի

1. **Դաստիարակչական իդեալի նպատակը** – Անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն, որը նպաստում է երեխայի՝ սոցիալական միջավայրին ինտեգրվելուն:
2. **Ակնկալվող արդյունքի նպատակը** – Այնպիսի անձի զարգացումը, որին հատուկ են ձևավորված մտածական, բարոյական, հաղորդակցական , գեղագիտական և ֆիզիկական ներուժը՝ անհրաժեշտ մակարդակով, գործնական հմտություններն ու կարողությունները, ստեղծագործական գործունեության միջոցները և ինքնաճանաչման , ինքնազարգացման հնարներն ու միջոցները:
3. **Վարույթային նպատակը** /դաստիարակչական գործընթացի նախագծային վիճակը/ - Դպրոցում բարեկիրթ միջավայրի հաստատումը, որը կնպաստի երեխայի անձնավորության զարգացմանը, նրա կողմից արժեքային համակարգի ընտրությանը:

### *Ուստարվա դաստիարակչական խնդիրները*

1. Աշակերտների մարդասիրական աշխարհայացքի ձևավորումը, որի շնորհիվ նրանք կկարողանան կառուցել կյանքը գիտակից ձևով և զարգանալ բարոյապես:
2. Վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, որը մարդկային էության կարևոր հատկանիշն է, մշտական կատարելագործման և ինքնադաստիարակության երաշխիքը: Աշխատանք մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:

3. Աշակերտների հաղորդակցումը ազգային մշակույթին, լեզվին, ավանդույթներին և սովորույթներին, ընդհանրապես հարազատ ժողովրդի հոգևոր արժեքներին:
4. Ֆիզիկական զարգացում, հիգիենիկ մշակույթ, մարդկանց հետ շփման կանոնների պահպանում:

***Այս խնդիրների և նպատակների իրականացումը ենթադրում է՝***

1. Անձնավորության լիարժեք զարգացման, նրա կյանքի և առողջության պահպանման բարենպաստ պայմանների և հնարավորությունների ստեղծում:
2. Սոցիալական կարևոր գործունեության տարբեր բնագավառներում ստեղծագործական ակտիվության դրսևորման և խթանման պայմանների ստեղծում:
3. Անընդհատ կրթական համակարգի զարգացում. կրթական մակարդակների և աստիճանների հաջորդականություն. հետազոտական և նախագծային գործունեության սատարում:
4. Մանկավարժական նոր տեխնոլոգիաների և մեթոդների արմատավորումը և կիրառումը գործնական աշխատանքներում:
5. Աշակերտական ինքնավարության տարբեր ձևերի զարգացում:
6. Լրացուցիչ կրթության համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը դպրոցում:

3. Աշակերտների հաղորդակցումը ազգային մշակույթին, լեզվին, ավանդույթներին և սովորույթներին, ընդհանրապես հարազատ ժողովրդի հոգևոր արժեքներին:
4. Ֆիզիկական զարգացում, հիգիենիկ մշակույթ, մարդկանց հետ շփման կանոնների պահպանում:

*Այս խնդիրների և նպատակների իրականացումը ենթադրում է՝*

1. Անձնավորության լիարժեք զարգացման, նրա կյանքի և առողջության պահպանման բարենպաստ պայմանների և հնարավորությունների ստեղծում:
2. Սոցիալական կարևոր գործունեության տարբեր բնագավառներում ստեղծագործական ակտիվության դրսևորման և խթանման պայմանների ստեղծում:
3. Անընդհատ կրթական համակարգի զարգացում. կրթական մակարդակների և աստիճանների հաջորդականություն. հետազոտական և նախագծային գործունեության սատարում:
4. Մանկավարժական նոր տեխնոլոգիաների և մեթոդների արմատավորումը և կիրառումը գործնական աշխատանքներում:
5. Աշակերտական ինքնավարության տարբեր ձևերի զարգացում:
6. Լրացուցիչ կրթության համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը դպրոցում:

7. Դաստիարակչական համակարգի բոլոր օղակների գործունեության և համագործակցության կոորդինացում՝ բազային և լրացուցիչ կրթություն, դպրոցը և սոցիումը, դպրոցը և ընտանիքը:

**Համադպրոցական դաստիարակչական խնդիրը –** Հանդուրժողական մտածողության մշակույթի ձևավորման դաստիարակչական տարածականության ապահովումը

**Դաստիարակչական համակարգի տիպը –** Անհատական անձնային կողմնորոշում

**Ծրագրի հիմնական ուղղությունները**

1. Աշակերտների հայրենասիրության, քաղաքացիականության և հանդուրժողական մտածողության մշակույթի դաստիարակումը
2. Հանդուրժողական ծնողի կերպարի ձևավորումը և զարգացումը
3. Ուսուցիչների հանդուրժողական մտածողության մշակույթի զարգացումը

**9-րդ դասարանի՝ որպես ավարտական դասարանի հիմնական խնդիրների, նպատակների լուծման ուղիները**

1. Յուրացրել է չափորոշչային պահանջները:
2. Սոցիալապես ակտիվ և օրինապահ է:
3. Հետևում է իրավահավասարության սկզբունքներին, մարդկանց հետ փոխհարաբերություններում անկաշկանդ ձևերին:
4. Քաղաքացի և հայրենասեր, որը կատարում է իր սոցիալական բոլոր դերերը՝ ընտանիքի անդամի, իր քաղաքի բնակչի, հայրենիքի քաղաքացու, աշխարհի մարդու:
5. Կողմնորոշված է դեպի հումանիստական արժեքները:

6. Ճանաչում է իր ներքին աշխարհը, ունի ինքնաճանաչողության և ինքնաիրացման պահանջմունք:
7. Ինքն է պատասխանատու իր ընտրած կյանքի ուղու համար:

## Նպատակները

1. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ անձնավորության ձևավորումը, ով մասնակից է հայրենիքի ճակատագրին և հարմարվել է հասարակական կյանքին, նրա ֆիզիկական, հոգևոր, բարոյական և մտածական զարգացման հիմքի ստեղծումը:
2. Հիմնավոր վճիռներ կայացնելու ընդունակությունների և դրանք տարբեր ոլորտներում իրականացնելու պատասխանատվության զարգացումը:
3. Հանդուրժողական անձնավորության զարգացումը՝ լինել նրբազգաց, պատասխանատու, գնահատել սեփական ազատությունը, ընկալել այլ մշակույթները, հարգել մարդկային արժանապատվությունը և անհատականությունը:

## Խնդիրները

1. Ուժեղացնել դաստիարակչական համագործակցությունը ուսումնական և արտաուսումնական գործընթացների միջև:
2. Պահպանել և զարգացնել դպրոցի ավանդույթները:
3. Ամրապնդել համագործակցությունը ծնողական հասարակայնության հետ:
4. Կատարելագործել դպրոցական և դասարանական ինքնավարությունը՝ ուղենիշ ընդունելով «Կարգապահություն և գիտակցություն» կարգախոսը:
5. Անցկացնել մրցույթներ՝ «Տարվա աշակերտ», «Լավագույն աշակերտական կոլեկտիվ»:
6. Զարգացնել ռազմահայրենասիրական գործունեությունը:
7. Ավանդույթ դարձնել էքսկուրսիոն- երկրագիտական աշխատանքները:

8. Աշակերտների մեջ արմատավորել գիտակցված վերաբերմունք դեպի աշխատանքը:
9. Ձևավորել առողջ ապրելակերպի պահանջմունք:

**Դաստիարակչական աշխատանքի հիմնական տեսակները**

1. Դպրոցական ավանդական միջոցառումների շարքը
2. Աշակերտական ինքնավարությունը
3. Լրացուցիչ կրթությունը
4. Մասնակցությունը քաղաքային, մարզային և հանրապետական միջոցառումներին
5. Էքսկուրսիոն-երկրագիտական գործունեությունը
6. Ռազմահայրենասիրական գործունեությունը
7. Առարկայական միամսյակները
8. Դպրոցական օլիմպիադաները
9. Աշխատանքը խնդրահարույց երեխաների հետ
10. Ծնողների և դպրոցի համագործակցությունը

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

1. Համադպրոցական հանդիսավոր տողան՝ նվիրված գիտելիքի օրվան /փոխտնօրեն, կազմակերպիչ/
2. Իրավական գիտելիքների դասեր /դասղեկներ/
3. Ծնողական ժողովներ /դասղեկներ/
   ա/ուստարվա խնդիրները
   բ/ծանոթություն դպրոցի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին
   գ/ անհանդուրժողականության և ծայրահեղության դրսևորումները դեռահասների շրջանում
4. Կազմակերպչական դասղեկական ժամեր /դասղեկներ/
5. Դասարանական ինքնավարության մարմինների ընտրություններ /դասղեկներ/
6. Աշակերտական խորհրդի ընտրություններ /փոխտնօրեն, կազմակերպիչ/
7. Համադպրոցական աշակերտական ժողով
   ա/ աշխորհրդի կատարած աշխատանքները նախորդ ուստարում
   բ/ աշխորհրդի ընտրություններ
8. Մրցույթների մեկնարկ /4-9-րդ դասարանների աշակերտների համար/ /աշխորհուրդ/
   ա/ Դասասենյակների ձևավորում
   բ/ «Տարվա լավագույն աշակերտները»
   գ/ «Լավագույն աշակերտական կոլեկտիվ»
9. Ստեղծել հուշալբոմ՝ «Հայոց ռազմական փառքի պատմությունը» /զինղեկ , աշխորհուրդ/
10. Ստեղծել համադպրոցական պատի թերթ՝ «Դպրոցական խճանկար» /աշխորհուրդ/

11. ՀՀ անկախության օրը
   ա/ դասղեկական ժամեր՝

«Ծայրահեղականությունը և հայրենասիրությունը»
/----------./
«Երեխայի պարտականություններն ու իրավունքները»
/----------/
«Արատավոր սովորույթները դեռահասների շրջանում»
/----------/
բ/ կավճանկարի մրցույթ՝ «Խաղաղությունը կյանքի հիմքն է»
/կազմակերպիչ-./

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. Հանդիսավոր ցերեկույթ՝ նվիրված նշանավոր մարդկանց
/----------/
2. Օպերացիա «Հոգատարություն» / այցելություն տարեց ուսուցիչների, թաղամասի միայնակ ծերերին, ծերանոց և այլն /փոխտնօրեն, կազմակերպիչ, աշխորհուրդ/
3. Շարադրությունների մրցույթ՝ «Պապիկն ու տատիկը կողքիս են» /5-րդ դասարանի դասղեկներ /
4. Միջոցառումներ՝ նվիրված ուսուցչի օրվան
«Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ»
/9-րդ դասարանների դասղեկներ./
ա/ ինքնավարության օր
/կազմակերպիչ, աշխորհուրդ/

5. 19 հոկտեմբերի – Ցարսկոյե Սելոյի լիցեյի օրը
/ռուսաց լեզվի ուսուցիչներ/
ա/ պատի թերթի լույսընծայում
բ/ վիկտորինա
գ/ մանրապատումներ ըստ Ա.Ս.Պուշկինի ստեղծագործությունների
6. Աշխատանքների մրցույթ՝ «Աշնանային Վանաձոր »
/փոխտնօրեն ,կազմակերպիչ/
7. Լուսանկարների մրցույթ՝ « Վանաձորյան բնանկարներ »
/փոխտնօրեն ,կազմակերպիչ/

8. Համագործակցությունը ՀԿ-ի հետ
/կազմակերպիչ, աշխորհուրդ/
9. Աշխորհրդի նիստ
10. Ասմունքի համադպրոցական մրցույթ
/կազմակերպիչ/

11. «Բրեյն - ռինգ»
/----------/
12. «Հեռուստատեսությունը և նրա ազդեցությունը մեր հասակակիցների վրա» /----------/
13. «Երկիր մոլորակի մարդկանց մաքուր մոլորակը»
/----------/
14. «Սովորում ենք տնտեսել»
/----------/

## ՆՈՅԵՄԲԵՐ

1. Նվիրված ժողովուրդների միասնության և հանդուրժողականության միջազգային օրերին՝
ա/ դասղեկական ժամեր՝ «Մենք վանաձորցիներս»
/----------./
բ/«Տարբեր ազգերի երեխանե՛ր, մենք բարեկամության երազով ենք ապրում»
/Յա դաս ՌՕ Վարդանյան/
գ/ «Ի՞նչ է նշանակում հարգել ուրիշին»
/----------/
դ/ «Փոխադարձ հասկացողությունը»
/----------./
ե/ «Ռասաներ, ժողովուրդներ, ազգեր»
/----------/

գ/ Անչափահասների ոչ ֆորմալ միավորումները
/9-րդ դասարաններ/
է/ «Երկիրը, որտեղ մենք ապրում ենք»
/----------/
ը/« Ինչպե՞ս է բնակչությունը դառնում ազգ»
/----------/

2. Մտածական խաղ-մրցույթ՝ «Բարի գործերով ենք միասնական»
/----------/
ա/« Մենք տարբեր ենք, բայց միասին ենք»
/ ----------./
բ/ «Բարությունը կփրկի աշխարհը» / լուսանկարների ալբոմի ստեղծում/
/փոխտնօրեն ,կազմակերպիչ, աշխորհուրդ/
գ/ Կավճանկարի մրցույթ՝ «Մենք միասին ենք»
/կազմակերպիչ/

3. Համադպրոցական ժողով
ա/ «Մեր դպրոցական կյանքը» / 2 ամիսների աշխատանքի արդյունքների ամփոփումը/
/Փոխտնօրեն, կազմակերպիչ, աշխորհուրդ/
բ/ «Լավագույն աշակերտական կոլեկտիվ» մրցույթի նախնական ամփոփումը ըստ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների արդյունքների
/Փոխտնօրեն, կազմակերպիչ, աշխորհուրդ/

4. Առողջ ապրելակերպի շաբաթ
ա/ Առողջության դասեր
/բուժքույր, դասղեկներ/
բ/ Ազգային խաղեր և մրցույթներ
/6-րդ դասարանների դասղեկներ/
գ/ Պատի թերթ՝«Մենք և առողջ ապրելակերպը»
/աշխորհուրդ/

5. Միջոցառումներ՝ նվիրված Թատրոնի միջազգային օրվան /հանդիպումներ Հ.Աբելյանի անվան պետական

դրամատիկական թատրոնի դերասանների, դպրոցի շրջանավարտ դերասանների, Կինոյի և թատրոնի ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի դասախոսների ու դերասանների հետ
/ փոխտնօրեն, կազմակերպիչ, աշխորհուրդ/

6. Սպորտլանդիաներ /5-րդ, 6-րդ,7-8-րդ դասարանների միջև/
/ֆիզղեկ/
7. «Առողջ սնունդ»
/----------./
8. «Վիտամին Վիտամինի»
/----------/

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

1. Ամանորին ընդառաջ
   ա/ տոնականորեն ձևավորել դասարանները
   /դասղեկներ, աշխորհուրդ/
   բ/ ամանորյա տոնահանդեսներ
   / դասղեկներ /
   գ/ ամանորյա մրցույթներ
   / դասղեկներ /
   դ/ «Դասարանական կայծեր»
   ե/ դասղեկական ժամեր՝ «Ամանորի պատմությունը աշխարհում և Հայաստանում»
   / դասղեկներ /

2. Աշխորհրդի նիստ
   ա/ ամանորյա միջոցառումների անցկացում
   բ/ դասղեկական ժամեր՝ «Բարության, գթության և ներման ժամանակը» /Փոխտնօրեն, կազմակերպիչ, աշխորհուրդ/
3. Շախմատային մրցաշար /5-9-րդ դասարաններ/
   /ֆիզղեկ/
4. «Քո ապագա մասնագիտությունը»
   /9-րդ դասարաններ/
5. «Ժամանակակից նորաձևությունը և առողջությունը»
   /----------/
6. «Քերականության թագավորությունում»
   /----------/ ամիսը շարժական

## ՀՈՒՆՎԱՐ

1. Համադպրոցական ժողով
   ա/ «Լավագույն աշակերտական կոլեկտիվ» մրցույթի նախնական արդյունքների ամփոփումը
   /Տնօրենություն, կազմակերպիչ, աշխորհուրդ/
2. «Իրավունք և պատասխանատվություն» շաբաթի անցկացումը

ա/ անչափահասների արատավոր սովորույթները
/----------./
բ/ հանդիպում ՆԳ ԱԳ բաժնի աշխատակիցների հետ
/----------/
գ/ երեխայի իրավունքներն ու պարտականությունները
/----------/
դ/ Առողջ ապրելակերպ
/----------/
ե/ «Ճամփորդություն բարեկեցության երկրում»
/----------/

3. Մրցույթ՝ «Զմեռային բնանկարներ»
/կազմակերպիչ, աշխորհուրդ/
4. Զմեռային զվարճանքներ
/դաստեկներ/
5. Նվիրված Հայոց բանակի ծննդյան օրվան
ա/ հանդիպումներ հայոց բանակի մարտիկների և հրամանատարների, արցախյան ազատամարտի մասնակիցների հետ
բ/ պատի թերթերի լույսընծայում
/դասարանների աշակերտական խորհուրդներ/
6. «Սովորություններ. լավ և վատ»
/----------/
7. «Արևի վրա էլ բծեր կան»
/----------/
8. 17 հունվարի «Երեխաների հայտնագործությունների օրն է»
*աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդես*
9. */Փոխտնօրեն կազմակերպիչ, աշխորհուրդ/*

## ՓԵՏՐՎԱՐ

1. Զմեռային զվարճանքներ՝ «Լոռվա ձմեռ»
/ֆիզդեկ/
2. Նվիրված Ա.Ս.Պուշկինի հիշատակին

ա/ երաժշտա-գրական երեկո «Սերը և կանայք Պուշկինի կյանքում» /փոխտնօրեն, ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներ, կազմակերպիչ /
բ/ պատի թերթի լույսընծայում
/ ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներ /
գ/ պոեզիայի ժամ
/ ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչներ /
Շարժական

3. Ազգային տոների օրեր
ա/ Սուրբ Սարգիս
/----------/
բ/ Բարեկենդան
/----------./

4. Ռազմամարզական մրցույթ՝ «Ձեզ տեսնենք տղանե՛ր»
/փոխտնօրեն ,զինղեկ., կազմակերպիչ, աշխորհուրդ/

5. Շախմատի մրցումներ
/ֆիզղեկ/

6. 19 փետրվարի՝ միջոցառում՝ նվիրված գիրք նվիրելու օրվան
/հայոց և օտար լեզվի մմ/

7. Թումանյանական ընթերցումներ՝ նվիրված Հ.Թումանյանի ծննդյան օրվան
/----------/

8. Միջոցառումներ՝ նվիրված Մայրենի լեզվի միջազգային օրվան
/----------/

9. «Կոնֆլիկտները և նրանց լուծման ճանապարհները»
/----------/

10. «Առակների աշխարհում»
*/4-րդ դասարաններ./*

## ՄԱՐՏ

1. Միջոցառումներ՝ նվիրված Կանանց միջազգային օրվան
ա/դասարանական միջոցառումներ

բ/«Ձեզ տեսնեն՛ք, աղջիկնե՛ր»
/----------/
գ/ «Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ»
/----------/

2. Հայրենասիրական երգերի և ազգային երգի համադպրոցական փառատոն
/փոխտնօրեն ,կազմակերպիչ, աշխորհուրդ/
3. «Նրանց անունով են կոչվում» համաժողով
/պատմության, գրականության ուսուցիչներ/
4. Միջոցառումներ՝ նվիրված գրքի շաբաթին
ա/ այցելություն գրադարաններ
/դասղեկներ/
բ/ հանդիպումներ Վանաձորի գրողների հետ
/----------/
5. Իրավական գիտելիքների շաբաթ
ա/ դասղեկական ժամեր՝ «Մարդու իրավունքներն ու պարտականությունները»
/8-9-րդ դասարանների դասղեկներ/
«Գիտենք արդյոք մենք օրենքը»
/----------/
«Ի՞նչ է նշանակում Ֆան-ակումբ»
/----------./
6. Համադպրոցական դաս՝ նվիրված Զրի համաշխարհային օրվան / «Զուրը կյանք է»
/----------./
7. Լուսանկարների մրցույթ՝ «Գարունն իմ քաղաքում»
/փոխտնօրեն , կազմակերպիչ, աշխորհուրդ/
8. Աշխորհրդի նիստ
9. Պիոներբոլ /6-րդ, 5-րդ դասարաններ/ /ֆիզղեկ/
10. «Ինչ մասնագիտություն ենք ընտրում»
/9-րդ դասարաններ/

11. Մասնագիտության կողմնորոշման գործունեություն /զրույց տարբեր մասնագիտության մարդկանց հետ, այցելություններ բանկեր, բժշկական կենտրոններ, լաբորատորիաներ և այլն/

*9-րդ դասարաններ*

13. Մարտի 2-ը «Բարձրաձայն ընթերցանության համաշխարհային օր"

## ԱՊՐԻԼ

1. Միջոցառումներ՝ նվիրված Մայրության և գեղեցկության օրվան

ա/ դասարանական պատի թերթերի լույսընծայում
/դասղեկներ, դասարանական աշխորհուրդներ/
բ/ շնորհավորական բացիկներ մայրիկներին
/դասղեկներ/
գ/ տոնական ցերեկույթ «Հարազատ ընտանիքում»
/----------./

2. Առողջության համաշխարհային օրը
ա/ դպրոցական փոքրիկ օլիմպիադաներ
/բուժքույր/
բ/ հանդիպումներ Վանաձորի մարզիկների և սպորտի վետերանների հետ /----------/

3. Թանգարանների միջազգային օրը
ա/ այցելություն քաղաքային պատկերասրահ, Ստ.Զորյանի տուն-թանգարան, քաղաքային երկրագիտական թանգարան
/դասղեկներ/

4. Ակցիա՝ «Կամավոր ծառայում ենք մեր քաղաքի մաքրությանը և կարգուկանոնին»
/բուժքույր, աշխորհուրդ/

5. Միջոցառումներ՝ նվիրված սբ. Զատիկի տոնին
/5-7-րդ դասարանների դասղեկներ/

6. Բնապահպանական դաս և ծառատունկ «Կանաչ բնություն»
/----------/
7. «Գեղեցիկը կփրկի աշխարհը»
/----------/
8. «Մենք ո՛չ ենք ասում ցեղասպանությանը»
/----------./

## ՄԱՅԻՍ

1. Միջոցառում՝ նվիրված մայիսյան հերոսամարտերին / Շուշիի գրավում, Մեծ հայրենական հաղթանակը, Ավարայրի ճակատամարտ, Բաշ-Ապարանի, Սարդարապատի և Ղարաքիլիսայի կռիվներ/
«Հայաստանն իմ տունն է» /----------/
2. Արիության դասեր
ա/ հանդիպումներ վետերանների և մարտիկների հետ
/զինղեկ/
բ/ աշակերտների երթ դեպի Մեծ հայրենականի հաղթանակին նվիրված հուշարձանը
/դասղեկներ/
գ/ կավճանկար ասֆալտի վրա՝ «Աշխարհի բոլոր երեխաները խաղաղություն են ուզում»
/կազմակերպիչ, աշխորհուրդ/
3. Աշխորհրդի նիստ
ա/ ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների ամփոփում /հաջողություններ և անհաջողություններ/
բ/ համադպրոցական ժողովի անցկացման նախապատրաստում և անցկացում
4. «Վերջին զանգ» միջոցառման նախապատրաստում և անցկացում /փոխտնօրեն, կազմակերպիչ/
5. Համադպրոցական ժողով
«Լավագույն աշակերտական կոլեկտիվ» և «Լավագույն աշակերտ» մրցույթներիի արդյունքների ամփոփումը

# ՀՈՒՆԻՍ

1. Հիմնական դպրոցի ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր ցերեկույթի նախապատրաստումը և անցկացումը
   /փոխտնօրեն, կազմակերպիչ/
2. Աշակերտների ամառային հանգստի կազմակերպումը
   /փոխտնօրեն, կազմակերպիչ/
3. Թեմատիկ էքսկուրսիաներ, արշավներ՝ հայրենի քաղաքը, մարզը և երկիրը ճանաչելու նպատակով
   /դասղեկներ/
4. Դասղեկների մասնագիտական վարպետության բարձրացում /նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրում/
5. Ծնողական ժողովների անցկացում
   /դասղեկներ/
6. Միջոցառումներ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային օրվան
   /փոխտնօրեն, կազմակերպիչ, դասղեկներ/

## *Դաստիարակչական աշխատանքի ուղղությունները*

1. Դաստիարակչական գործընթացի ախտորոշիչ-վերլուծական գործունեություն
2. Մեթոդական աշխատանք դասղեկների հետ
3. Ներդպրոցական հսկողության /մոնիտորինգի/ կազմակերպում
4. Աշակերտական խորհրդի աշխատանքներ
5. Ծնողների հետ աշխատանքի կազմակերպում
6. Աշխատանք արտադպրոցական կազմակերպությունների հետ
7. Անհատական աշխատանք ծնողների և երեխաների հետ
8. Սովորողների ապահով կենսագործունեության հաստատում
9. Լրացուցիչ կրթության կազմակերպում/խմբակներ, ակումբներ/
10. Աշխատանք շնորհալի երեխաների հետ

11. Առողջ ապրելակերպ
12. Համադպրոցական միջոցառումներ

## *Դպրոցական ավանդական միջոցառումներ*

1. Մասնակցություն օգոստոսյան խորհրդակցությանը
2. «Սեպտեմբերի մեկ» հանդիսավոր տողանը /սեպտեմբեր/
3. Ուսուցչի օր / հոկտեմբեր/
4. Քաղաքի օր *հոկտեմբեր*
5. Ամանորյա հանդեսներ /դեկտեմբեր/
6. Հայոց բանակի ծննդյան օրը /հունվար/
7. Ռազմամարզական միջոցառումներ
8. Սուրբ Սարգսի տոնը /փետրվար/
9. Բարեկենդանի տոնը /փետրվար/
10. Միջոցառումներ՝ նվիրված Մարտի 8-ին և Գարնան ու մայրության օրվան /մարտ-ապրիլ/
11. Հանդիսավոր միջոցառումներ՝ նվիրված մայիսյան հաղթանակներին /մայիս/
12. Միջոցառումներ՝ նվիրված Երեխաների պաշտպանության միջազգային օրվան /հունիս/
13. Հանդիսավոր ցերեկույթ՝ նվիրված վկայականների հանձնելու արարողությանը /հունիս/